Երկրորդ ընթերցում

Նախագիծ

Կ-877[14]-22.10.2015,03.11.2015-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի մայիսի 17-ի ՀՕ-60 օրենքում (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 3-րդ մասում՝

1) «այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման և (կամ) վերադարձման» բառերը փոխարինել «միասնական հաշվին մուտքագրման» բառերով,

2) հանել «պետական բյուջե վճարվող պարտադիր վճարների օրենքով սահմանված կարգով հաշվարկված պարտավորություններից ավելի վճարված գումարների վերադարձի հիմնավորվածության,» բառերը:

Հոդված 2. Օրենքի հավելված 1-ի՝

1) վերնագրում և 1.1-րդ կետում հանել «, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների՝ օրենքով սահմանված կարգով հաշվարկված պարտավորություններից ավելի վճարված գումարների վերադարձի» բառերը,

2) 1.2-րդ կետի «ա» ենթակետում հանել «տնտեսվարող սուբյեկտի այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման ենթակա այլ գումարների հաշվին տնտեսվարող սուբյեկտի պետական բյուջե հաշվեգրվող այլ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման,» բառերը,

3) 1.2-րդ կետի «բ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«բ) գերավճարների գումարը որոշելու անհրաժեշտությունը.»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի և հարակից օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ կատարված առաջարկությունների և փոփոխությունների

Առաջարկության հեղինակը	**Առաջարկության բովանդակությունը**	**Կատարված փոփոխությունները**
«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ		
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է ՓՄՁ սուբյեկտների կողմից շահագործվող հին սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաները նոր սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաներով փոխարինելու վերջնաժամկետը 2016 թվականի հունվարի 1-ի փոխարեն սահմանել 2017 թվականի հունվարի 1-ը:	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:
«Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին»		
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է հարկ վճարողներին թույլ տալ շարունակել համարվել շրջանառության հարկ վճարող, եթե նրանց փոխկապակցված անձինք որևէ գործունեություն չեն իրականացրել:	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում: